ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-606[1]-07.05.2020-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետում՝

ա. *«ավագ օպերլիազոր,»* բառերից հետո լրացնել *«ավագ պարեկ,»* բառերով.

բ. *«օպերլիազոր»* բառից հետո լրացնել *«, պարեկ,»* բառով:

2) 5-րդ կետում *«կրտսեր տեսուչ,»* բառերից հետո լրացնել *«-կրտսեր պարեկ,»* բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում «30» թիվը փոխարինել «35» թվով:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում՝ *«պաշտոններում»* բառից հետո լրացնել *«՝ բացառությամբ պարեկի և ավագ պարեկի պաշտոնների,»* բառերով:

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1-րդ մասով.

«6.1. Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում (բացառությամբ գլխավոր խմբի պաշտոնների և հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների)՝ ոստիկանության ծառայության պաշտոններում կարող են նշանակվել միայն ոստիկանության ուսումնական հաստատությունում պարեկի նախնական մասնագիտական կրթություն ստացած անձինք: Ոստիկանության

ստորաբաժանումների ծառայողների նշանակումը պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում (բացառությամբ վերջինիս կազմում հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների) կատարվում է բացառապես ոստիկանության ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացը ավարտելուց հետո:»

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«*1.1) Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման՝ կրտսեր և միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման՝ երեք տարին մեկ անգամ:*»:

Հոդված 5. Օրենքի 54-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Ոստիկանության ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերի և դասընթացների կազմակերպման և իրականացման նպատակով կարող են ներգրավվել պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամ չհամարվող անձինք, որոնց հետ կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր: Կրթական ծրագրերում ներգրավված, սակայն ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամ չհամարվող անձանց ընտրության կարգը և ներկայացվող չափանիշները սահմանում է ոստիկանության պետը՝ հաշվի առնելով կրթական ծրագրի առանձնահատկությունները:»:

Հոդված 6. Օրենքի 55-րդ հոդվածը

1) 1-ին մասի *«նախնական և»* բառերը հանել:

2) 10-րդ մասում *«լեյտենանտի կոչում»* բառերից հետո լրացնել *«, իսկ պարեկի նախնական մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտներին լեյտենանտի կոչում կարող է շնորհվել, եթե վերջիններս նշանակվեն ոստիկանության միջին խմբի պաշտոններին համապատասխանող պարեկի պաշտոնում»* բառերով:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Մինչև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժի մեջ մտնելու օրը ոստիկանության ուսումնական հաստատության կողմից նախնական մասնագիտական կրթության հայտարարված ծրագրերով (բացառությամբ պարեկի նախնական մասնագիտական կրթության) կարող են ընդունվել առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

4. Սույն օրենքի ընդունումից հետո Ոստիկանության՝ պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման ծառայողների առաջին կազմին պաշտոնի նշանակում է Ոստիկանության պետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետում՝

ա. *«ավագ օպերլիազոր,»* բառերից հետո լրացնել *«ավագ պարեկ,»* բառերով.

բ. *«օպերլիազոր»* բառից հետո լրացնել *«, պարեկ,»* բառով:

2) 5-րդ կետում *«կրտսեր տեսուչ,»* բառերից հետո լրացնել *«-կրտսեր պարեկ,»* բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում «30» թիվը փոխարինել «35» թվով:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում՝ *«պաշտոններում»* բառից հետո լրացնել *«՝ բացառությամբ պարեկի և ավագ պարեկի պաշտոնների,»* բառերով:

2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1-րդ մասով.

«6.1. Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում (բացառությամբ գլխավոր խմբի պաշտոնների և հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների)՝ ոստիկանության ծառայության պաշտոններում կարող են նշանակվել միայն ոստիկանության ուսումնական հաստատությունում պարեկի նախնական մասնագիտական կրթություն ստացած անձինք: Ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների նշանակումը պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում (բացառությամբ վերջինիս կազմում հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող ծառայողների) կատարվում է բացառապես ոստիկանության ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացը ավարտելուց հետո:»

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1) Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման՝ կրտսեր և միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման՝ երեք տարին մեկ անգամ:»:

Հոդված 5. Օրենքի 54-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Ոստիկանության ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերի և դասընթացների կազմակերպման և իրականացման նպատակով կարող են ներգրավվել պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամ չհամարվող անձինք, որոնց հետ կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր: Կրթական ծրագրերում ներգրավված, սակայն ոստիկանության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամ չհամարվող անձանց ընտրության կարգը և ներկայացվող չափանիշները սահմանում է ոստիկանության պետը՝ հաշվի առնելով կրթական ծրագրի առանձնահատկությունները:»:

Հոդված 6. Օրենքի 55-րդ հոդվածը

1) 1-ին մասի *«նախնական և»* բառերը հանել:

2) 10-րդ մասում *«լեյտենանտի կոչում»* բառերից հետո լրացնել *«, իսկ պարեկի նախնական մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտներին լեյտենանտի կոչում կարող է շնորհվել, եթե վերջիններս նշանակվեն ոստիկանության միջին խմբի պաշտոններին համապատասխանող պարեկի պաշտոնում»* բառերով:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից: ~~օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

2. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Մինչև սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժի մեջ մտնելու օրը ոստիկանության ուսումնական հաստատության կողմից նախնական մասնագիտական կրթության հայտարարված ծրագրերով (բացառությամբ պարեկի նախնական մասնագիտական կրթության) կարող են ընդունվել առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

4. Սույն օրենքի ընդունումից հետո Ոստիկանության՝ պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման ծառայողների առաջին կազմին պաշտոնի նշանակում է Ոստիկանության պետը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Կառավարություն (Քրիստիննե Գրիգորյան)	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 3-րդ հոդված	Հոդվածով լրացվող 14-րդ հոդվածի 6.1-րդ մասի խմբագրության երկրորդ նախադասությունից հանել *«այլ»* բառը	Ընդունվել է Ոստիկանության ծառայողները պարեկային ստորաբաժանման կազմում պաշտոնի նշանակվելիս (բացառությամբ հետաքննության մարմնի լիազորություններ իրականացնող պաշտոնների) ենթակա կլինեն պարտադիր վերապատրաստման	Ընդունվել է
Կառավարություն (Քրիստիննե Գրիգորյան)	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդված	Հոդվածի 1-ին մասը հանել	Ընդունվել է։ Դրույթն իրացվում է նույն նախագծի 3-րդ հոդվածի կարգավորմամբ։	Ընդունվել է
Կառավարություն (Քրիստիննե Գրիգորյան)	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և	Հոդվածում *«հրապարակման օրվան հաջորդող*	Ընդունվել է։ Նախագծի ընդունման հրատապությամբ	Ընդունվել է

01.06.2020թ.	լրացումներ կատարելու մասին» օրենքի 5-րդ հոդված։	*տասներորդ օրը»* բառերը փոխարինել *«հրապարակման հաջորդող օրվանից»* բառերով։	պայմանավորված անհրաժեշտ է վերջինիս ուժի մեջ մտնելը սահմանել նշված ժամկետում։	
Կառավարություն (Քրիստինե Գրիգորյան) 01.06.2020թ.	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 7-րդ հոդված	Հոդվածում *«հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը»* բառերը փոխարինել *«հրապարակման հաջորդող օրվանից»* բառերով։	Ընդունվել է։ Նախագծի ընդունման հրատապությամբ պայմանավորված անհրաժեշտ է վերջինիս ուժի մեջ մտնելը սահմանել նշված ժամկետում։	Ընդունվել է
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Նշված մասում *«անձինք»* բառից հետո լրացնել *«, ովքեր ունեն ոստիկանական միջին մասնագիտական կամ Կառավարության կողմից սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն։»* բառերը։	Չի ընդունվել։ Առաջարկում ներկայացվող մոտեցումը չի համապատասխանում նախագծի էությանը և ոստիկանության պարեկային ծառայությունում ներգրավման ենթակա թիրախային խմբին, որը ամրագրված է նաև Կառավարության կողմից հաստատված Ոստիկանության ոլորտի բարեփոխումների ռազմավարությամբ։	Չի ընդունվել
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	*«Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը»* բառերը փոխարինել *«2021թ. հունվարի 1-ից»*	Չի ընդունվել։ Ոստիկանության ոլորտի բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսվում է 2021 թվականի առաջին եռամսյակում գործարկել Պարեկային	Չի ընդունվել

	օրենքի 7-րդ հոդված	բառերով։	ծառայությունը, որին, ի թիվս այլ միջոցառումների, նախորդելու են ապագա պարեկային ծառայողների հինգամսյա դասընթացները, ինչպես նաև ենթաօրենսդրական նորմատիվային դաշտի համապատասխանեցումը։ Առաջադրված նպատակին հնարավոր չի լինի հասնել առաջարկվող դրույթի սահմանման դեպքում։	